ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

« 12 » 03 2016 թ. N 09/01/01/1847-16

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 11.03.2016 թվականի հարցման

Հարգելի տիկին Դոյդոյան,

Հայտնում ենք, որ 2016 թվականի հունվարի 1-ից ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում տեղեկատվության տրամադրման գործընթացն իրականացվում է «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման /այսուհետ՝ Որոշում/ համաձայն:

1. 2016 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 12-ը ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ստացել է թվով 20 էլեկտրոնային հարցում:
2. Ստացված հարցումներին տրվել են գրավոր պատասխաններ, վերահասցեագրված կամ մերժված հարցումներ չեն արձանագրվել:
3. ՀՀ գյուղատնտեսության նախարարության www.minagro.am պաշտոնական կայքը /այսուհետ՝ Կայք/ 2014 թվականից հնարավորություն է ընձեռում այցելուներին նախարարությանն ուղղել նաև էլեկտրոնային հարցումներ Կայքի «գրել առցանց նամակ» http://minagro.am/%D5%A4%D5%AB%D5%B4%D5%A5%D6%84-%D5%B4%D5%A5%D5%A6/%D5%A3%D6%80%D5%A5%D5%AC%D5%A1%D5%BC%D6%81%D5%A1%D5%B6%D6%81%D5%B6%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF/%D6%86%D5%AB%D5%A6%D5%AB%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%B1/ և «առցանց խորհրդատվություն» http://minagro.am/%D5%A1%D5%BC%D6%81%D5%A1%D5%B6%D6%81%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 11) 52 46 41, ֆաքս. (374 11) 52 46 10
էլ. փոստ agro@minagro.am

%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%A1%D5%BC%D6%81%D5%A1%D5%B6%D6%81-%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/ բաժինների միջոցով:

Այժմ քայլեր են ձեռնարկվում նաև Որոշման 3-րդ կետով սահմանված ժամկետում Կայքում էլեկտրոնային թվային ստորագրության միջոցով հարցում գրելու կամ ստորագրված հարցումները կցելու հնարավորություն ապահովելու ուղղությամբ:

4. Կայքում առկա է «հաճախ տրվող հարցեր» բաժին, որը թարմացվել է ընթացիկ տարվա փետրվար ամսին՝ http://minagro.am/%D5%B0%D5%A1%D5%B3%D5%A1%D5%AD-%D5%BF%D6%80%D5%BE%D5%B8%D5%B2-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A5%D6%80/ :

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Որոշման հավելված N 1-ի 7-րդ մասի համաձայն՝ դիմողներին հնարավորություն է տրվել նաև առցանց եղանակով հետևել «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրված իրենց հարցումների ընթացքին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

կատարող՝ տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին
հեռ՝. 011 521524